

Տ. ՍԵՎԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՂԱՐԻՊՅԱՆ

Ծնվել է 1940 թ. Բեյրութում:

Նախնական կրթությունը ստացել է տեղի ազգային Աբգարյան և Մուբինյան վարժարաններում:

Հետևել է Բեյրութի Հայոց Եկեղեցու Կիրակնօրյա դասընթացներին:

1960 թ., ավարտելով Կիրակնօրյա լսարանը, ուսուցչության է նշանակվել նույն լսարանում:

Դպրության աստիճան և ուրար ստանալով Լիբանանի հայոց առաջնորդ հանգուցյալ գերաշնորհ Տ. Տաճատ արքեպիսկոպոսից, ծառայել է Բեյրութի Ս. Հարություն եկեղեցում:

1965 թ. ընդունվել է Երուսաղեմի դպրեվանք:

1966 թ. մայիսի 28-ին, ձեռամբ ամենապատիվ Տ. Եղիշե Պատրիարքի, ձեռնադրվել է սարկավագ:

1968 թ. հաջողությամբ ավարտելով դպրեվանքի երեքամյա ուսման շրջանը, ձեռնադրվել է կուսակրոն քահանա, ձեռամբ Տ. Եղիշե Պատրիարքի:

Նույն տարին ստանձնել է ժառանգավորաց վարժարանի ու ընծայարանի հսկիչի, իսկ հաջորդ տարվանից՝ փոխտեսչի պաշտոնները:

1972 թ. ապրիլի 1-ին Պատրիարք Սրբազանից ստացել է վարդապետական աստիճան:

Սրբազան հայրը դասավանդել է կրոն և հայոց պատմություն Սրբոց Թարգմանչաց երկրորդական վարժարանում:

Գերաշնորհ սրբազան հայրը իր երկարամյա կրոնական գործունեության ընթացքում վարել է Ս. Աստվածածին եկեղեցու և Ս. Հրեշտակապետաց վանքի տեսչի ու մատակարարի պաշտոնները, անդամ է Պատ. տնօրեն ժողովի և փոխատենապետ միաբանական ընդհանուր ժողովի: 1976 թ.-ից Լուսահանի պաշտոնն է վարում և անդամ է գանձատան հանձնախմբի: